

Հարցաշար
Առարկայական օլիմպիադայի «Հայոց Եկեղեցու
պատմություն» առարկայի
մարզային փուլ
11-12-րդ դասարաններ - (120 րոպե)

№ 1-8

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. **Հայոց ո՞ր կաթողիկոսին են անվանել «Հոգևոր սուր».** (0,5 միավոր)

1. Վրթանեսին 2. Արիստակեսին 3. Ներսես Մեծին 4. Հուսիկին

2. **Ո՞ւմ հրամանով սպանվեց Սարգիս գորավարը.** (0,5 միավոր)

1. Հերակլ կայսեր 2. Հուլիանոս Ուրացող կայսեր
3. Հերովդես արքայի 4. Շապուհ արքայի

3. **Թարգմանաբար ի՞նչ է նշանակում իսլամ բառը.** (0,5 միավոր)

1. եղբայրասիրություն 2. երջանկություն 3. ողջախոհություն 4. հնազանդություն

4. **Ե՞րբ է հիմնադրվել Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքությունը.** (0,5 միավոր)

1. 1446 թ. 2. 1453 թ. 3. 1461 թ. 4. 1468 թ.

5. **Նոր Ջուղայի ո՞ր վանքին կից է գործել տպարան.** (0,5 միավոր)

1. Ս. Կաթողիկե 2. Ս. Զորավոր 3. Ս. Աստվածածին 4. Ս. Ամենափրկիչ

6. **Հայոց ո՞ր կաթողիկոսի օրոք է հրատարակվել հայ առաջին պարբերականը.**

1. Սիմեոն Ա Երևանցի (0,5 միավոր)
2. Ղուկաս Ա Կարնեցի
3. Աբրահամ Ա Կրետացի
4. Մովսես Գ Տաթևացի

7. **Ո՞րն էր 1947 թ. Նյու Յորքում բացված Հայկական համաշխարհային կոնգրեսի օրակարգի գլխավոր հարցը.** (0,5 միավոր)

1. Հայոց պահանջատիրության խնդիրը
2. Հայրենիք-սփյուռք հարաբերությունների սերտացման խնդիրը
3. Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրության հարցը
4. Ամենայն Հայոց կաթողիկոսության և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության միավորման հարցը

8. Ո՞վ է գրել. «Աստվածապաշտ երկրի համար համարձակ մեռեք, որովհետև հենց այդ մահն Աստծու համար է».
(0,5 միավոր)

1. Եղիշեն 2. Մովսես Խորենացին 3. Փավստոս Բուզանդը 4. Ղազար Փարպեցին

№ 9-12

Կառուցված պատասխանով առաջադրանքներ

9. Բագրատունյաց արքաների տոհմական դամբարանը գտնվում էր Անի քաղաքի մոտ գտնվող -
----- վանքում:
(1 միավոր)

10. ----- կաթողիկոսը արգելեց 1903 թ. հունիսի 12-ի օրենքի հրապարակումը հայկական մամուլում և հատուկ կոնդակով թեմերից պահանջեց իշխանություններին չհանձնել իրենց ունեցվածքը: (1 միավոր)

11. Վաչագան Բարեպաշտ արքայի հանձնարարությամբ Հայաստանից այդ վանք են տեղափոխվել Ս. Գրիգոր Լուսավորչի, Ս. Հռիփսիմե և Ս. Գայանե կույսերի մատուները մի մասը:
(1 միավոր)

12. Պատարագի այդ հատվածը սկսվում է, երբ հացն ու զինին բերվում են Սուրբ Սեղանի վրա, և պատարագիչ քահանայի աղոթքներով և աստվածային զորությամբ սրբազորվում:

(1 միավոր)

№ 13-14

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 4 փաստից

13. Եկեղեցական ժողովները համապատասխանեցնել դրանք հրավիրող կաթողիկոսների անուններին:
(1 միավոր)

- | | |
|------------------------|---------------------------------|
| 1. Գրիգոր Դ Տղա | ա) Ծամնդավի ժողով |
| 2. Ներսես Ա Պարթև | բ) Հռոմկլայի համահայկական ժողով |
| 3. Զաքարիա Ա Չազեցի | գ) Շուղրիի Կարմիր վանքի ժողով |
| 4. Գրիգոր Գ Պահլավունի | դ) Դվինի առաջին ժողով |
| 5. Բաբկեն Ա Ոթմսեցի | ե) Աշտիշատի ժողով |
| | զ) Շիրակավանի ժողով |

1	
2	
3	
4	
5	

14. Կաթողիկոսների անունները համապատասխանեցնել նրանց տրված պատվանուններին.
(1 միավոր)

1. Ներսես Դ
2. Պետրոս Ա
3. Գրիգոր Բ
4. Գրիգոր Զ

- ա. Վկայասեր
- բ. Տղա
- գ. Շնորհալի
- դ. Ապիրատ
- ե. Գետադարձ

1	
2	
3	
4	

№ 15-17

Աշխատանք սկզբնաղբյուրով

15. «Ինչպես որ նրա դեղնուցը գնդաձև է և գտնվում է մեջտեղում, սպիտակուցը նրա շուրջն է, իսկ կճեպը շրջապատում է չորս կողմից, ճիշտ այդպես էլ երկիրը գտնվում է մեջտեղում, օդը՝ նրա շուրջը, իսկ երկինքը շրջապատում է չորս կողմից»:

Ո՞վ է մեջբերված մեկնաբանության հեղինակը:

(1 միավոր)

16. «Հայ ժողովուրդն օրհասական կռիվներ շատ է ունեցել և միշտ ելք է գտել ու փրկել իրեն: Ելքը եղել է անձնագոհ հերոսությունը... Հե՛տ նայեցեք, մեզ մնացել են Երևանն ու Էջմիածինը... Եթե հերոսության չլիմեք, ամեն ինչ կորչելու է իսպառ, այլևս չի լինի ո՛չ հայ, ո՛չ հայի հայրենիք...»:

Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը:

(1 միավոր)

17. « ...Նա շատ մեծ անուն էր հանել, անարատ և արդար մարդ էր, շատ առաքինի, հոետորական գիտության քաջագիտակ, Աստծո Հին ու Նոր Կտակարաններին քաջատեղյակ և ամեն տեսակետից կարող էր օգտակար լինել Քրիստոսի հոտին: ... Հրաժարվելով աշխարհիկ կյանքից՝ նա [մտածեց] հավիտենական կյանքի մասին. լուսավորեց Հայաստանը բազում և տարբեր մեկնություններով, բոլոր լեզուներից թարգմանություններ կատարեց և Աստծո եկեղեցին լցրեց աստվածային սուրբ գրքերով: Նա հայոց ժողովրդի մեջ պայծառացրեց վանական դասը, նա էր, որ վերականգնեց սուրբ Գրիգոր Լուսավորչի աթոռը Հայաստանում և փայլեց սրբությամբ և ամենայն պարկեշտությամբ: Նա պահեցող էր և աղոթող»:

(1 միավոր)

1) Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը:

(1 միավոր)

2) Ո՞ւմ մասին է այդպես արտահայտվել պատմիչը:

№ 18-19

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն
և խմբավորում պահանջող առաջադրանքներ՝ 2 ճիշտ պատասխանով

18. Հայոց եկեղեցու տոների վերաբերյալ բերված փաստարկներից ո՞րն է սխալ.
(2 x 1 = 2 միավոր)

- 1) Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքին նվիրված տոնը կոչվում է Կաթողիկե Սուրբ Էջմիածնի տոն:
- 2) Հայոց եկեղեցին Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնությամբ Տյառնընդառաջը հաստատել է իբրև նորապսակների և նորակազմ ընտանիքների օրհնության օր:
- 3) Հայոց եկեղեցին Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնությամբ Սուրբ Սարգսի տոնը հռչակել է երիտասարդների օրհնության օր:
- 4) Հայոց եկեղեցին Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնությամբ Ավետման տոնը հռչակել է որպես մայրերի օրհնության օր:
- 5) Հայոց եկեղեցին Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնությամբ Ծաղկազարդի օրը հաստատել է որպես մանուկների օրհնության օր:
- 6) Վարդանանց տոնին նախորդող երեքշաբթի օրը Հայոց եկեղեցին նշում է Ղևոնդյանց տոնը:

19. Թվարկվածներից ո՞ր երկուսը Հայոց եկեղեցու ինը ժամերգություններից չեն.
(2 x 1 = 2 միավոր)

- 1) Խաղաղական
- 2) Մթնշաղի
- 3) Հանգստյան
- 4) Արևազալի
- 5) Գիշերային
- 6) Ցերեկային

№ 20

Շարադրանք (2 միավոր)

Որո՞նք են ազգերին բնութագրող հիմնական հատկանիշները: Ներկայացրեք հայոց լեզվի դերն ու նշանակությունը ազգապահպանության գործում: